ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «30» հունիսի, 2022 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 14-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2022» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունիսի 29-ի N 1219-Ա/2 հրամանը՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» մրցույթը պատշաճ կազմակերպելու համար՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Շ. Աղաբեկյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի զետեղումը ՀՀ գիտության կոմիտեի ինտերնետային կայքում:

2. ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռ. Ասատրյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը:

3. ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ